գերապատիւ Մ. եպիսկոպոս Բարխուդարեան սրբազանի ասելով, Ուտիացոց երկրի՝ Հայից դարձած մահմեդականների թիւն է 15480 տուն *։ Ուրիշ խօսքով՝ եթէ միջին հաշուով 5 մարդ ընդունելու լինինք ամեն մի ընտանիքում, այն ատեն 15480-ը բազմապատկելով 5-ով կստանանք 77400 հոգի, որ մեզ նման փոքր և ցիր ու ցան ազգի համար մի ահագին կորուստ է։ Իմ ընթերցողներին մի ճիշտ ու հաստատ գաղափար տալու համար, մի առ մի առաջ եմ բերում գըլխաւորապէս Հայկական այն գիւղերն ու աւանները, որոնք թուրքացել են ուղիղ 152 տարի մեզանից առաջ՝ արիւնարբու մահմեդականների սոսկալի լկանքներից ու անտանելի բռնութիւններից ստիպուած։ Ծուխ

1. Խաչ-ժաս	1004	Ջակայք	311
2. Վանտաժ	766	11. Վարդանլու և շրջակայք	260
3. Փատառ	680	12. Մուխանց (մուխանցած)	261
4. Ղութղաշէն	532	13. (Թուրք) Օրաբան	150
5. Բումաւանում	416	14. Բաշ-Քիւնգիւտ	203
6. Թքեանլու	231	15. Քշլաղ Քիւնգ	171
7. Զայդիտ	461	16. Պտէզ (պարտէզ)	150
8. Զարազան-Զարդուն	262	17. Գիս և շրջակ.	330
9. Նովուր Ղշլաղ և շրջակ.	200	18. Կոխ-Մուխ (մուխը ոտքով կո-	
10. Էրմանիտ և շըր-			

*) Տես «Աղուանից երկիր», երես 229։